«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ

“Blejan” ecological, social, business support NGO

Ծրագրի անվանում «Քաղաքացիական մասնակցության և կամավորության խթանում»

Հաշվետվություն

Ժամանակահատված՝ 2011թ. 16 մայիս-31 օգոստոս

I. Ծրագրի իրագործումը

Ծրագրի նպատակը:

Նպաստել ակտիվ ու արդյունավետ քաղաքացիության և կամավորականության զարգացմանը Գավառ քաղաքում:

№	Նախատեսված գործողություն	Տեղեկություն (ներ) նախատեսված գործողության իրականացման մասին	Պատասխանատու (ներ)	Կատարման ժամկետը	Ներկայացվող փաստաթղթեր և նյութեր
1	Պատրաստել հայտարարության տեքստ և հայտի ձև երիտասարդների ներգրավման համար:	Պատրաստվել է հայտարարություն և հայտի ձև մանակիցների ներգրավման համար:	Ծրագրի ղեկավար, համակարգող	16 մայիս	Հայտարարության տեքստ, հայտի ձև
2	Հայտարարել մասնակիցների հավաքագրում	Էլեկտրոնային փոստով տարածվել է հայտարարությունը և հայտի ձևը ՀԿ-ների, անհատ երիտասարդների շրջանում:	Համակարգող	17-18 մայիս	
3	Կնքել պայմանագրեր ծրագրի աշխատակազմի և փորձագետների հետ:		Ծրագրի ղեկավար	1 հունիս	Ներկայացված են ֆինանսական հաշվետվությամբ:
4	Իրականացնել հայտերի ընդունում և մասնակիցների ներգրավում:	Հայտ է ներկայացվել 17 երիտասարդների կողմից: Ընտրվել են 15 մանակիցներ, որից 9 մասնակիցներ անգլերենի երկամյա ուսուցմանը մասնակցելու համար:	Ծրագրի ղեկավար, համակարգող, համագործակից ՀԿ-ի ներկայացուցիչ, անգլերենի ուսուցանողներ	2 հունիս	Քննարկման լուսանկար, ընտրված մասնակիցների ցուցակ
5	Իրականացնել «Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով ընդհանուր թվով	Իրականացվել են հետևյալ դասընթացները՝ 1) Քաղաքացիական հասարակություն, 2) ՔՀԿ կառույցներ, նրանց տեսակները, առանձնահատկությունները, 3) Մասնակցություն և կամավորություն,	Ծրագրի ղեկավար, համակարգող, ուսուցանողներ (Հասմիկ	8, 17, 29 հունիս, 7, 9, 13, 19, 25, 27 հուլիս	Մասնակիցների ստորագրված ցուցակի օրինակ, լուսանկարային հաշվետվություն,

	12, ինչպես նաև թվային հմտությունների, ինտերնետի և նրա հնարավորությունների մասին 2 դասընթացներ շաբաթական 2 օր, 3-ական ժամ տևողությամբ:	4) Կամավորության հնարավորությունը ԵՄ-ի «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրում, 5) Շրջակա միջավայրի պաշտպանություն, 6) Օրհուսի կոնվեցիան և նրա կիրառումը, 7) Ոչ ֆորմալ կրթության ներածություն, 8) Ինքնաներկայացում. ինչպես պատրաստել ինքնակենսագրություն(CV), 9) Մարդը մարդկանց մեջ. միջանձնային արդյունավետ հաղորդակցություն, 10) Միջմշակութային հարաբերությունների ներածություն, 11) Արդյունավետ թիմային աշխատանք և բախումների լուծում, 12) Ծրագրային գործունեություն: Ինչ է ծրագիրը, ծրագրային մշակույթ-2 դասընթաց, 13) Թվային հմտությունների ձեռքբերում-1 դասընթաց: Մասնակիցների ցանկությամբ՝ «Թվային հմտությունների ձեռքբերում» թեմայով դասընթացը իրականացվել է 1 անգամ, իսկ նախատեսված մյուս դասաժամերին իրականացվել է «Ծրագրային գործունեություն: Ինչ է ծրագիրը, ծրագրային մշակույթ» թեմայով դասընթացը: Դասընթացներն իրականացվել են ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանական սկզբունքներին համահունչ՝ մասնակցային վարժություններ, խաղեր, անհատական և թիմային	Խաչատրյան-8 դասընթաց, Լուսինե Թոփլաղալցյան-4 դասընթաց, Լիաննա Ասոյան-1 դասընթաց, Աննա Վարդանյան-1 դասընթաց)	4, 9, 16, 18, 19 օգոստոս	դասընթացների համառոտ նկարագիր

		առաջադրանքներ, հարցադրումներ, մտքերի գրոհ, տեսանյութեր և այլն: Խրախուսվել է փոխօգտնությունը և թիմային ոգին, մասնակիցների գնահատումը և առաջարկությունները: Պրեզենտացիան նյութերը տպագիր ձևով տրամադրվել են մասնակիցներին: Որոշ դասընթացներին մասնակցել են նաև ՀԿ-ի կամավորները՝ որպես ազատ ունկնդիրներ:			
6	Կազմակերպել և իրականացնել անգլերենի երկամսյա ուսուցում շահագրգիռ մասնակիցների համար (առավելագույնը՝ 7 անձ), 2-ական ժամ տևողությամբ, ընդհանուր հաշվով՝ 18 դասընթաց:	Իրականացվել են նախատեսված դասընթացները նախատեսված ժամաքանակով: Նախապեսանգլերենի ուսուցմանը մասնակցելու համար ընտրվել են 9 շահառուներ: Քանի որ 1 մասնակից հաճախել է 4 դասընթացի, և բացթողածը հնարավոր չի եղել լրացնել, ուսուցմանը լիարժեք մասնակցել են 8 երիտասարդներ: Անգլերենի ուսուցման ընթացքում ուշադրություն է հատկացվել ինչպես գրավոր, այնպես և բանավոր խոսքի զարգացմանը: Ուսուցանվել է քերականություն: Դասընթացներն իրականացվել են ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանությամբ: Արդյունավետորեն իրականացվել են մասնակցային վարժություններ, խաղեր, տրվել են անհատական և թիմային առաջադրանքներ, հարցադրումներ, մտքերի գրոհ, օգտագործվել են պրեզենտացիաներև տեսանյութեր: Ուսուցմանն աջակցությունն է ցուցաբերվել Գավառում «Խաղաղության կորպուս» կազմակերպության կամավոր Դոննա Գրենելի կողմից:	Ծրագրի ղեկավար, համակարգող, կամավորներ (Աննա Դադոյան, Էմմա Դադոյան)	10, 11, 13, 14, 23, 24, 27 հունիս 1, 4, 6, 8, 12, 18, 24, 28 հուլիս 1, 3, 5 օգոստոս	Լուսանկարային հաշվետվություն, մասնակիցների ցուցակի օրինակ, ուսուցման թեմատիկ պլան, թեմատիկ պրեզենտացիաների օրինակներ

7	Իրականացնել 1 էքսկուրսիա Երևան մասնակիցների միջև վստահության կառուցման նպատակով: Էքսկուրսիայի ընթացքում այցելել 1 թանգարան և 1 թատրոն:	Իրականացվել է էքսկուրսիա Երևան: Այցելություն է իրականացվել Հայաստանի պատմության թանգարան, «Հաղթանակ» զբոսայգի և Երևանի դրամատիկական թատրոն («Սպանել սիրո համար» կատակերգություն): Առավոտյան մինչև Երևան հասնելը իրականացվել է բացօթյա նախաճաշ, իսկ կեսօրին ճաշ «Տաշիր պիցցա» սննդի կենտրոն: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 21 անձ (ծրագրի շահառուներ, աշխատակազմ):	Ծրագրի աշխատակազմ, կամավորներ	25 հունիս	Օրակարգ, լուսանկարներ
8	Պատրաստել մասնակցության վկայագրեր և շնորհել մասնակիցներին:	«Քաղաքացիական մասնակցություն և կամավորություն» խորագրով դասընթացներին և անգլերենի ուսուցմանը 80 % և ավել մասնակցելու համար պատրաստվել և շնորհվել են վկայագրեր: Ընդհանուր թվով՝ շնորհվել է 15 վկայագիր: Կամավորական սկզբունքներով անգլերենի ուսուցում իրականացնելու համար վկայագրեր են շնորհվել կամավերներ Աննա Դադոյանին, Էմմա Դադոյանին, Սոնա Խաչիկյանին (3 վկայագիր):	Ծրագրի ղեկավար	19 օգոստոս	Վկայագրի օրինակ
9	Կազմակերպել թիրախ խմբի համար հանդիպումներ Գավառի 5 ՔՀԿ-ներում «Բաց դռներ» ձևաչափով՝ տեղական ՔՀԿ-ների գործունեության տիրույթում քաղաքացիական ակտիվության և կամավորականության խնդիրների քննարկման նպատակով:	Հանդիպումների իրականացման համար նամակ-առաջարկներ են հղվել 5 ՔՀԿ-ների՝ «Գեղամա» հեռուստատեսություն, Գեղարքունիքի ՇՊԱԿ, «Վորլդ վիժն» կազմակերպության Գավառի գրասենյակ, Գավառի Օրհուս կենտրոն, «Բարի հույս» ՀԿ: Բոլոր ՔՀԿ-ները սիրով են արձագանքել հանդիպումներ իրականացնելու առաջարկին, ինչպես նաև բավական նախապատրաստական աշխատանք իրականացրել հանդիպումներն արդյունավետ իրականացնելու համար:	Ծրագրի ղեկավար, Համագործակցից ՀԿ	7 հուլիս, 17 օգոստոս	Նամակի օրինակ, լուսանկարներ

		«Գեղամա» հեռուստատեսության գլխավոր խմբագիր Վահագն Դաբաղյանի կողմից մանրամասն ներկայացվել է հեռուստատեսության գործունեությունը, ինչպես նաև կամավոր աշխատանքի հնարավորությունները: Մյուս ՔՀԿ-ների կողմից ևս ներկայացվել են իրենց կազմակերպություններում կամավորական աշխատանքի հնարավորությունները, դիմելու ընթացակարգերը, հանդիպումներից հետո էլեկտրոնային փոստով մասնակից երիտասարդներին ուղարկվել են հայտերի ձևեր «Վորլդ վիժն» կազմակերպության Գավառի գրասենյակի և Գավառի Օրհուս կենտրոնի կողմից:			
10	Գավառի ՔՀԿ-ների առաջարկներով կազմել կամավորի ներգրավման ուղեցույց, որը կհանդիսանա իբրև կամավորների ներգրավման փաթեթ:	Ուղեցույցը կազմվել է ինչպես ՔՀԿ-ների, այնպես և այլ գրքույկների, ուղեցույցների ուսումնասիրման արդյունքում:	Ծրագրի ղեկավար, Համագործակից ՀԿ	15 հուլիս- 15 օգոստոս	Ուղեցույց
11	Ուղեցույցը տրամադրել ՔՀԿ-ներին:	Ուղեցույցը տրամադրվել է այն ՔՀԿ-ների, որտեղ իրականացվել են հանդիպումներ: Հավելվածները (կամավորի հետաքրքրության հայտի ձև, անվանաքարտի ձև) տրամադրվել են նաև էլեկտրոնային տեսքով: Ծրագրի ավարտից հետո այն կտրամադրվի նաև այլ ՔՀԿ-ների, որոնք հետաքրքրված կլինեն:	Ծրագրի ղեկավար	15-31 օգոստոսի, և ծրագրի ավարտից հետո	
12	Ստեղծել տարբեր ՔՀԿ-ներում որպես կամավորներ կամ քաղաքացիական ակտիվ աշխատանքում ներգրավել ցանկացող	Ծրագրում ներգրավված երիտասարդների տվյալները էլեկտրոնային փոստով և առձեն ծրագրի ավարտից հետո տրամադրվել և տրամադրվելու են Գավառի ՔՀԿ-ներին:	Ծրագրի ղեկավար	20-25 օգոստոս, և ծրագրի ավարտից հետո	

	երիտասարդների տվյալների շտեմարան և տրամադրել Գավառի շահագրգիռ ՔՀԿ-ներին:				

II. Վերահսկում և գնահատում

Ելնելով աշխատանքային պլանից՝ ծրագրի ղեկավարի կողմից իրականացվել է պլանավորվածի հետ համադրման գործընթաց:

Դասընթացների ավարտին շահառուների լրացրած գնահատման թերթիկները հնարավորություն են տվել ժամանակին նկատել թերացումները, շտկել դրանք, փոփոխություններ իրականացնել շահառուների առաջարկություններով: Ծրագրային նախատեսված գործողությունների ժամանակ (էքսկուրսիա, հանդիպումներ ՔՀԿ-ներում) ևս առաջադրվել են հարցեր, որոնց նպատակն է եղել ճշտել, թե ծրագրային գործողությունները տանու՞մ են ծրագրի խնդիրների և նպատակի իրականացում:

III.Համագործակցություն

- «Գեղամա» հեռուստատեսություն
- Գեղարքունիքի ՇՊԱԿ
- «Վորլդ վիժն» կազմակերպության Գավառի գրասենյակ
- Գավառի Օրհուս կենտրոն
- «Բարի հույս» ՀԿ

IV. Շնորհատուի դրամական միջոցների ծախսումը

Առդիր ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվությունը՝ բոլոր ստացականների, հաշիվների, անդորրագրերի, պայմանագրերի, ճանապարհածախսերի և գործուղման ծախսերի և այլնի պատճեններով:

Կազմակերպության ղեկավար _____ (Լիաննա Ասոյան)

ստորագրություն

Կ. Տ.